ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2017 թվականի **թիվ 176** քաղ. Մոսկվա

Մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը կատարելու ապահովման չափի հաշվարկման կառուցվածքի եւ ձեւաչափի մեջ փոփոխություններ կատարելու մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մաքսային օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Փոփոխություններ կատարել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 117 որոշմամբ հաստատված՝ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը կատարելու ապահովման չափի հաշվարկման կառուցվածքի եւ ձեւաչափի մեջ՝ հավելվածի համաձայն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 19-ի
թիվ 176 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը կատարելու ապահովման չափի հաշվարկման կառուցվածքի եւ ձեւաչափի մեջ կատարվող

1. 3-րդ աղյուսակում՝

ա) «Տվյալների տիպ» վանդակի մեջ 9.1.6.2, 9.1.11.2 եւ 9.1.12.3.4.2 դիրքերում «M.SDT.00179» նշագիրը փոխարինել «M.CA.SDT.00409» նշագրով.

բ) [փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]

գ) «Տվյալների տիպ» վանդակի մեջ 9.1.17.3.2 եւ 9.1.17.4.3.4.2 դիրքերում «M.SDT.00179» նշագիրը փոխարինել «M.CA.SDT.00409» նշագրով.

դ) [փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]

ե) «Տվյալների տիպ» վանդակի մեջ 9.1.24.1 դիրքում «Երկարությունը՝ 4» բառերը հանել:

2. 9-րդ աղյուսակում՝

ա) 13 դիրքից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ դիրքով՝

«14	M.CA.SDT.00409	MeasureUnitAbbreviationCodeType	Չափման միավորի պայմանական նշագիրը– Ծածկագիր: Տիպը	պայմանանշանների նորմալացված տողը Նվազ. երկարությունը՝ 1: Առավ. երկարությունը՝ 13».

բ) «Համարը՝ ը/կ» վանդակի մեջ 14-րդ եւ 15-րդ դիրքերում «14» եւ «15» թվերը համապատասխանաբար փոխարինել «15» եւ «16» թվերով: